ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լաֆլաս։

Պետրոս Սիմոն Լաֆլաս գաղղիացին, որ չափաբերութեան պարծանք եղաւ, և մեր դարուս երկրաչափից դասուն պարագլուխ, ծնաւ Դաղղիոյ Պոմոն-ան-Օժ ըսուած տեղը 1749ին մարտի 23ին։ Հայրը եկենաւոր էր, որով Լաֆլասայ առաջին տարիներն ալ առանց հնչանակութեան մը անցեր են։ Բայց ինչպէս որ շատ հեղ պզտի հասակէն կ'իմացուի տղու մը ետքէն ինչ ըլլալը, Լաֆլաս ալ իւր առաջին ուսանողութեանը մէջ հրաշալի յիշողութիւն մը կը ցուցներ և մտաց զօրութիւն, որով գերազանցեց իւր ամէն աշակերտակիցքը։ Դեռ մանկահասակ մանաւոր սէր ձգեց աստուածաբանութեան, և կը պատմեն թէ գժուարին վիճաբանութեանց մէջ կարգէ դուրս նրբամտութիւն ու հանճար կը բանեցընէ եղեր։ Մինչ ժամանակի մէջ լաւ կերպով յոյն և լատին լեզուները սովորեցաւ, և քանի մը պզտի գործքեր ալ շարադրած է, որ թէպէտ գովմանալի բաներ չեն, 'ի վերայ այսր ամենայնի իր մտաց առաջին փայլմունքը կրնան սեպուիլ։

Բայց Լաֆլաս շուտով ձեռքէ ձգեց իմաստասիրութիւնն ու գեղեցիկ դրպրութիւնները, և տուաւ ինքն զինքն երկրաչափական իսրին գիտութեանը, որուն արդի դիւտերը՝ դեռ Փարիզ չգնացած ինքն իրեն քններ էր։ Ի երջը մտածելով որ շատ հարկաւոր էր Իրեն այս բանիս մէջ լաւ յաջողելու համար ուսումնական քաղաք մը բնակիլ, եկաւ շիտակ Փարիզ գնաց. բայց ասով ալ բոլորովին իւր սրտին փափագը չի լեցուեցաւ. վասն զի ինչպէս սովորութիւն է ուսանող երիտասարդաց երևելի մարդու մը ետևէ երթալ իրենց գիտութիւնը կատարելագործելու համար, ինքն ալ այնպիսի մը կը փնտռէր։ Ան ժամանակները մեծ էր տ' Ալամպէռ երկրաչափին համբաւը, Լաֆլաս ալ անոր վրայ սէր ձգեց, և շատերէն յանձնարարական թղթեր առած եկաւ անոր գնաց իւր իղձն յայտնելու. բայց տ' Ալամպէռ զինքը չընդունեցաւ։ Ինն ատեն Լաֆլաս նստաւ տ' Ալամպէռին թուղթ մը գրեց որուն մէջ լաւ կերպով մեքենականութեան սկզբանցը վրայ իր ունեցած տեղեկութիւնը կու տար։ Տ' Ալամպէռ զարմացած Լաֆլասին մտաց զօրութեանը վրայ մէկէն պատասխանեց իրեն թէ "Կը տեսնես որ „ես յանձնարարութիւնները բանի տեղ „չեմ սեպեր. բայց դու անոնց ալ հար„կաւորութիւն չունիր, և աւելի լաւ „կերպով յայտնեցիր ինծի դու զքեզ „քու հանճարովդ, և այս բաւական „է. ասկէ վերջը պատրաստ եմ ձեռ„քիս եկած պաշտպանութիւնն քեզի „ընելու"։ Այս իրօք ասոր վրայ քանի մը օր անցաւ չանցաւ տ' Ալամպէռին առաջարկութեամբը Լաֆլաս, որ դեռ 19 տարուան էր, Փարիզու գինուորական դպրոցին չափաբերութեան դասատու կարգեցաւ։ Յարոն Ձեմարանին նախագահն ալ իւր Մեկենան եղաւ, որ իրեն ծախիւրը Լաֆլասին գործքերը տպագրել տուաւ, որով այնչափ մեծցաւ Լաֆլասին համբաւը որ դեռ 24 տարեկան Փարիզու գիտութեանց Ձեմարանին անդամ ընտրուեցաւ։ Ասով աւելի կերպով Լաֆլաս եռևէ եղաւ իւր սիրելի իսրին գիտութեանց, և մեծաւ եռանդեամբ սկսաւ փնտռել տիեզերաց դրութեան օրէնքները, և բոլորովին վերլուծական տեսութեանց տուաւ ինքն զինքն. միանգամայն ջանք ընելով հաւանականութեանց ըսուած հաշիւը ընդարձակելու կատարելագործել։ 1784ին Տեսուչին զարգման և Լեբրաշէսեան յոյ մոլորակաց[1] ըսուած գիրքն հրատարակեց, որուն ետևէն ալ 1785ին Տեսուչին յգիոդուչեանց գնդաձևոյ և յոյ մոլորակաց[2] ըսուած գիրքն հանեց։ Բայց Լաֆլասի համբաւն ու փառքը

1 Գլ. Théorie du mouvement et de la figure elliptique des planètes.

2 Գլ. Théorie des attractions des sphéroïdes et de la figure des planètes.

անմահացուցողներն իւր Նայապրոնեան դրութեան փիլիսոփայ [1] և Երկնային շարժաբանութեան [2] ըսուած գործքերն են։ Երբոր Պաղլիոյ ուսումնականաց ժողովը մնաւ՝ առաջարկեց որ տարին մէյ մը ժողովին երկասիրութիւնները ժողովրդեան պատգամաւորներուն ներկայացուին, և ինքն գլուխ ընտրուեցաւ այս պաշտօնս կատարող անդամոց։

Լափլաս Պաղլիոյ հիւպատոսներէն ներքին գործոց պաշտօնեայ ընտրուեցաւ, բայց շուտով ձգեց այս պաշտօնը իւր անյարմարութեանն համար. ինչպէս Լափոլէոն ալ կ'ըսէ թէ "Լափլաս, առաջին կարգի երկրաչափ, շուտով ցոյց ուց քաղաքական հոգաբարձութեան անյարմար ըլլալը, և իւր առաջին գործքէն իմացանք որ խաբուեր ենք եղեր"։ Այնուհետև այս պաշտօնը կատարելէն ետև, 1799ին սինկղիտիկոս ընտրուեցաւ, 1803ին նոյն ժողովոյն փոխանակ նախագահի եղաւ, և երբոր Էգէոն պատուոյ ըսուած կարգն հաստատուեցաւ՝ նոյն կարգին մեծ նշանն առաւ։ Ներակուտի ժողովոյն առաջարկեց որ հասարակապետական տումարը ձգուի ու նորէն Գրիգորեան տումարը գործածուի։ 1806ին կայսրութեան կոմս ընտրուեցաւ, և 1813ին Այրութեան ըսուած կարգին սպայապետ եղաւ։ Յաջորդ պատիւներու մէջ Լափլաս ուսմունքը ձեռքէ չի թողուց և 1812ին Արլոժական պեսոնիան հաւանականութեանց [3] և 1814ին Նմանապիրական ճաշակ հաւանականութենէ [4] ըսուած գործքերն հրատարակեց։

Պորպոնեանց հարիւրօրեայ իշխանութեան միջոցը ամենևին թափլլերի չի տեսնուեցաւ, թէպէտև Պորպոնեանք երկրորդ դարձին իրեն պատիւները պահեցին։ 1821ին Համառօտութիւն պատմութեան ասպետաբաշխութեան ըսուած գիրքն հրատարակեց և 1825ին ալ Տեսութիւն հաւանականութեանց ըսուած գիրքն ալ յաւելուած մ'ըրաւ։ Այս 'ի այս գործքերէն քանի մը երեւելի ճառեր ալ ունի որ Պաղլիոյ Ճեմարանին և ուրիշ ուսումնական հաւաքմանց մէջ տպուած են։ Լափլաս իւր այս գործքերովը մեծ համբաւ հանեց բովանդակ Եւրոպիոյ մէջ, և գրեթէ ամէն երեւելի Ճեմարաններ զինքն իրենց անդամ գրեցին։

Իրեն առանձնական կեանքը շատ սակաւապէտ և զգուշաւոր էր, անոր համար ինչուան վերջը ամենևին հիւանդութիւն չքաշեց, բաց 'ի մահուան հիւանդութենէն, որ երկար տևեց, և մեռաւ Պարիզ 1827ին մարտի 5ին 78 տարուան։

Մեռնելու ատեն երբոր բարեկամներն մահուան անկողնոյն չորս կողմը շարուած՝ իրեն գիտութեանց մէջ թողած անմահական փառացին ու պատուոյն վրայ կը խօսէին, և երեւելի գիտերն կը յիշատակէին, այս ամենաճշմարիտ պատասխանը տուաւ անոնց. "Գիտցածնիս ամենաքիչ բան է, իսկ չգիտցածնիս անբաւ"։

Լափլաս, ինչպէս որ առաջ ալ ըսինք, մեր դարուս առաջին կարգի գիտուններէն մէկն է։ Տեսական աստեղաբաշխութեան գլխաւոր առաջարկութեանց մեծ մասը արդէն լուծեր էր մինչդեռ տակաւին ձեռք չէր զարկած այն ընդարձակ գործոյն որ իւր բովանդակ հանճարոյն և աշխատութեանց նպատակ դրեր էր. այս ինքն է նոր կարգի մը գտնել երկնից գիտութիւնը, և վայելուչ դասաւորութիւն մը տալ մեծամեծ դրութեանց, իւր նախընթացից քանի մը սխալները շտկել, վերջապէս մինչև այն ատեն քանի մը մեծամեծ երեւութից անծանօթ մնացած մեկնութիւնը տալ։ Բոլոր կենացը մէջ ասոնք էին իւր մտածմունքը, որուն գեղեցիկ պտուղն է Երկնային շարժաբանութիւն ըսուած գործքը, զորն որ վերն ալ յիշեցինք, որ է մտաց նրբութեան և մարդկեղէն հանճարոյն կարողութեանը զարմանալի գործքերէն մէկը, որուն մէջ Լափլաս տեսական աստեղաբաշխու-

1 Գզ. Exposition du système du monde.
2 Գզ. Mécanique celeste.
3 Գզ. Théorie analytique des probabilités.
4 Գզ. Essai philosophique sur les probabilités.

թեան գժուարակնձիւն գիտութեան լուսաւոր ճամբայ մը կը բանայ, զոր իրաւապէս Ֆուրիէ աստեղաբաշխը, որ Գաղղիոյ գիտութեանց Ակադեմիային մէջ Ֆիլասայ ներբողեանը կարդաց, Մէմգենոդ կամ Նոսոմեծ ԺԸ դարուն կ'անուանէ։ Ֆիլաս այս գործքիս մէջ գեղեցիկ կարգաւ մէկտեղ հաւաքեց ինչ որ մինչև իւր ժամանակը չափաբերութիւնն ու բնական գիտութիւնը հաստատեր էին իբրև ճշմարիտ, և ինչ աստիճանի աստեղաբաշխութեան հիմն ու հաստատութիւն կրնան ըլլալ, և իւր գեղեցիկ գիւտերովը այն կատարելութեանն հասուց տիեզերքայ գիտութիւնը, որ Թէպէտ երկնից երեսը մինչև հիմայ մեծամեծ գիւտեր եղան, սակայն Ֆիլասայ հեղինակութենէն և ոչ կէտ մը նուազեցաւ, և է միշտ իբր պատգամատու բնութեան գաղտնի օրինացը իւր լուսաւոր պարաններովը, մինչև անոգ թէ ետևի գիւտերը իւր գործքը աւելի զարգացուցին։

Նայտրոնիւն դրութեան փիլիսոփայ գրքին մէջ Ֆիլաս մանաւոր կերպով ջանացեր է մէկ հատորի մը մէջ բովանդակել աստեղաբաշխութիւն բոլոր սկզբունքները, դուրս թօթափելով խորին ու գժուարակնձիւն հաշիւները՝ որոնց վրայ հիմնեալ է այս գիտութիւնս, և անոնց հետ կը խօսի որոնք որ չափաբերական գիտութեանց խորերը չեն մտած, և կ'ուզեն աստեղաբաշխական բարձրագոյն ծանօթութիւններուն տեղեկանալ։

Տիմոթէոսի իմաստասիրի հարցին թէ ուր ուսար, կամ ով է վարդապետն քո։ ասէ։ Ասեանն Աթենացւոց և Ակադեմիան։ զայս ասելով ցուցանէ թէ ջանք և հմտութիւն իրին՝ վեհագոյն է ամենայն վարդապետութեանց։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կրակ մարող գործի։

Ինդղիւացի Ֆիլիպի անունով Ճարտարապետին մէկը կրակ մարելու գործի մը հնարեր է, զոր ինքը կրակ ոչնչացուցող[1] կ'անուանէ։ Այս գործին այնպէս շինուած է որ կրակին վրայ գոլորշիի սաստիկ յորձանք մը վազցունելով մէկէն կը մարէ։ Ասոնցմէ այս գործուոյս մեծ փորձ մը եղեր է, որուն յաջողութիւնը ամէն տեսնողները զարմացուցեր է։ Այս բանիս համար մանաւոր փայտէ տուն մը շինել տուեր են, երկու դատիկն բարձրութեամբ, բոլոր նաւթով օծած ու մէջն ալ փայտի տաշեղներով լեցուն. և երբոր տունը ամէն կողմանէ կրակ առած կը բռընկէր, կրակ ոչնչացուցողը իւր գոլորշիի յորձանքը սաստկութեամբ մը տան վրայ արձակեց, որով հրդեհեալ տունը քանի մը վայրկենի մէջ բոլորովին մարեցաւ։

Անգղիոյ կառավարութիւնը մանաւոր յանձնարարութեամբ խել մը այս գործիքէս շինել տալ ապրսպրեց արքունի շէնքերուն համար. նոյնպէս հրդեհներու դէմ ապահովութեան ընկերութիւններէն շատը հետզհետէ այս գործիքէս շինել տալու ետևէ են։ Շատ ատեն չէ որ այս գործիքէս խել մը Ամերիկա ալ խրկուեցաւ, մանաւորապէս արքունի ծովարանին համար։

Կը փափագինք որ Պօլսոյ մեր ազգային եղբարքն ալ այս գործիքս ստանային, մանաւանդ թէ տերութեան առաջարկեին այս գործիքէս խել մը բերել տալու, որ անպարտ տեղը Պոլսոյ հարուած սեպուած հրդեհներուն դէմ զօրաւոր միջոց մը կ'ըլլար, որուն գինը, իրեն պզտիկութեանն ու մեծութեանը համեմատ, 3էն ինչուան 7 լիրէ ստերլին է։

1 Անգղ. Fire-Annichilator.